

ՓՕԼ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ ԳԵՂԱՆԿԱՐԻՉԸ

Posted on January 16, 2011 by Keghart



Category: [Opinions](#)



Համօ Մոսկովեան, Պէյրուզ, 16 Յունուար 2011

Ոսկեգարդ էջ մըն էր 1956թ-ը սփիւռքահայ հռչակաւոր գեղանկարիչ Փօլ Կիրակոսեանի բեղուն կեանքին մէջ: Գրեթէ «անծանօթ», բազմիցս վտարանդի բայց բնածին արուեստագետ երիտասարդը՝ կ'արժանանայ ոչ միայն Լիբանանի գեղարուեստի ակադեմիայի առաջին մրցանակին՝ այլեւ Իտալիոյ «Արուեստներու մայրաքաղաք» Ֆլորանսի՝ «Biennial of Florence» պատուաւոր մրցանակին եւ թոսքանային խմբային ցուցահանդէսի ոսկի մետալին: Իր կեանքի գլխաւոր հանգրուան՝ Լիբանանի կառավարութիւնն եւ արուեստի բարձրագոյն շրջանակները կը փութան տեր կանգնիլ խաւարէն դիպի լոյս ճաճանչող հայազգի տաղանդին եւ նախագահ Քեմիլ Շամուկի յատուկ հրամանագրով՝ Փօլ Կիրակոսեանի կը շնորհուի Լիբանանի քաղաքացիութիւն:

Համօ Մոսկովեան, Պէյրուզ, 16 Յունուար 2011

Ոսկեգարդ էջ մըն էր 1956թ-ը սփիւռքահայ հռչակաւոր գեղանկարիչ Փօլ Կիրակոսեանի բեղուն կեանքին մէջ: Գրեթէ «անծանօթ», բազմիցս վտարանդի բայց բնածին արուեստագետ երիտասարդը՝ կ'արժանանայ ոչ միայն Լիբանանի գեղարուեստի ակադեմիայի առաջին մրցանակին՝ այլեւ Իտալիոյ «Արուեստներու մայրաքաղաք» Ֆլորանսի՝ «Biennial of Florence» պատուաւոր մրցանակին եւ թոսքանային խմբային ցուցահանդէսի ոսկի մետալին: Իր կեանքի գլխաւոր հանգրուան՝ Լիբանանի կառավարութիւնն եւ արուեստի բարձրագոյն շրջանակները կը փութան տեր կանգնիլ խաւարէն դիպի լոյս ճաճանչող հայազգի տաղանդին եւ նախագահ Քեմիլ Շամուկի յատուկ հրամանագրով՝ Փօլ Կիրակոսեանի կը շնորհուի Լիբանանի քաղաքացիութիւն:

Մրցանակներն ու ոսկե մետալները «հեղեղային» կերպով մը թափին ծայրահեղ չքաւորութենէ, Ալեքսանտրէթի «Սանճագ»-ի մէջ 1926-ի ծնած, որք բայց քաջարի, հսկայական տաղանդով օժտուած Փօլ Կիրակոսեանին վրայ: Հայկական Երուսաղէմի մէջ կը կազմաւորուի ապագայ հանրաճանաչ արուեստագետին աշխարհը՝ ուր հակառակ բազմաչարչար մօր եւ շրջապատին յորդորներուն՝ թէ «արուեստը հաց չի կերցներ», կը շարունակէ գծել ու նկարել, յաճախելով Երուսաղէմի Studio Yarkon-ը:

Պաղեստինի քաղաքացիական արիւնալի պատերազմէն հեռանալով՝ կը հաստատուի Պէյրուզ՝ ուր կը հանդիպի իր կեանքի գլխաւոր նեցուկին եւ ընկերուհիին՝ ի՛ր իսկ աշակերտուհի, նոյնպէս տաղանդաշատ գեղանկարչուհի Ժուլիէթ Հինտեանին: 1953թ-ին կը կազմէ համերաշխ ընտանիք մը, որ կը պարգեւէ զաւակներ (Սիլվա, Էմմանուէլ, Արաքսի, Ժան-Փօլ, Արամ, Մանուէլլա): Բոլորն ալ գեղանկարչութեան նուիրեալներ ու նաեւ արուեստագետներ, որոնց պաստառները նոյնպէս ցուցադրուած են բազմաթիւ անհատական եւ խմբային ցուցահանդէսներու մէջ, աշխարհի չորս ծագերը: Փօլ Կիրակոսեանի ներշնչման գլխաւոր աղբիւրները կ'ըլլան մասնաւորապէս իր տիկինը՝ Ժուլիէթը եւ ամենէն փոքր աղջիկը՝ Մանուէլլան՝ որոնց նուիրած է շարք մը

ստեղծագործութիւններ:

Վերադառնալով «ոսկեայ օրեր»-ու յաղթարշաւին՝ ապա եւ Իտալիոյ միջազգային ցուցահանդեսներուն դարձեալ ոսկիէ մետալին արժանացած (Gallery Permanente)՝ ՓՕԼ Կիրակոսեանի արուեստը յոտընկայս կը ծափահարեն ու զինք դափնիներով կը զարդարեն 1959թ-ին Ֆրանսայի Biennal-ի մէջ՝ ուր կ'արժանանայ 1961-62թ.թ.-ու ֆրանսական կառավարութեան կրթաթոշակին: Ֆրանսայի մէջ աւելի զարգացնելէ ետք իր կերպարուեստը՝ կը վերադառնայ Լիբանան, շարունակելով շնորհակալ առաքելութիւնը որպէս միջազգային համբաւի արժանացած գեղանկարիչ ու դասախօս՝ ունենալով հարիւրաւոր աշակերտներ՝ որոնցմէ շատեր այսօր պատուով ու յարգանքով կը յիշեն իրենց անմոռանալի արուեստի դաստիարակը, մնալով գեղարուեստի աշխարհին մէջ:

Մրցանակներն ու տիտղոսները կը յաջորդեն իրարու: 1964-ին կ'արժանայ Գերմանիոյ արուեստներու եւ մշակոյթի համադաշնակցութեան մրցանակակիր եւ 1974-ին Ասպետի արժանեաց շքանշանին՝ Գերմանիոյ կառավարութեան կողմէ: Նոյնպէս կը հանդիսանայ առաջին դափնեկիր Սուրսոքներու թանգարանի ցուցահանդեսին եւ Ֆիլիպսի մրցանակակիր (Լիբանան, 1968), իսկ 1970 թուին «Ազգային Կրթութեան» առաջին մրցանակակիր: 1984 թուականին Ֆրանսայի կառավարութիւնը հայ մեծանուն գեղանկարիչին կը շնորհէ «Արուեստի եւ գրականութեան Ասպետ»ի բարձրագոյն տիտղոսը: Յաջորդ տարի, արժանանալով Հայաստանի՝ Մարտիրոս Սարեանի անուան արուեստի մրցանակը, կը պարգեւատրուի «Սուրբ Սիլվեսթր»ի անուան Ասպետի կարգավիճակով ու շքանշանով՝ Յովհաննէս-Պօղոս Բ. Հռոմի Պապին կողմէ:

Նոյնպէս իր տարիներու վաստակը կը գնահատէ Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ հայրապետ Երջանկայիշատակ Գարեգին Բ., շնորհելով լիբանանահայ գեղանկարիչին «Սուրբ Մեսրոպ Մաշտոց»ի շքանշան եւ Ասպետի տիտղոս:

Հակառակ հոգեկան եւ ֆիզիքական ահաւոր հարուածին՝ կորսնցնելով իր սրունքը եւ հաշմանդամ դառնալով արկածի պատճառով, ՓՕԼ Կիրակոսեան ամուր կերպով կը պաշտպանէ իր քաջարի արուեստագետի կորովը՝ ինչպէս Փարիզի մէջ 1989-1991 թուականներուն, որ կը յատկանշուի 1992 թուականին իր անհատական ցուցահանդեսով Institute du Monde Arab-ին մէջ, ուր կը ներկայացուին իր ստեղծագործութեանց գլուխ-գործոցները: Իր գործերը մնայուն կերպով տեղ կը գրաւեն Վատիկանի, Վիեննայի, Փարիզի, Երեւանի, Սաու Փաուլոյի, Ուաշինկթընի, Ամմանի, Զուէյթի, Մոսկուայի, Մինսքի, Դամասկոսի ու մասնաւորապէս Պէյրութի լաւագոյն պատկերասրահներուն մէջ:


Մինչ այդ, միջազգային մեծ ճանաչում եւ յարգանք ձեռք բերած մեծ վարպետը ունեցած էր 100է աւելի անհատական եւ շարք մը խմբային ցուցահանդեսներ: 1993 թուականի Նոյեմբեր 20ին, իր մահկանացուն կնքելէ առաջ, ամբողջացուց իր լաւագոյն

ստեղծագործութիւնը, որ իր իսկ խոստովանութեամբ՝ «հիւնը նորին հետ միացնելն էր՝ մէկ գեղանկարի մէջ...»:

Մահուընէ աւելի քան 17 տարի ետք, Փոլ Կիրակոսեանի արուեստը անընդհատ վերարժեւորման գործընթաց կ'ապրի: Իր պաստառները հայ գեղանկարչութեան՝ կերպարուեստի դպրոցին ամենէն շատ գնահատուած, միջազգային աճուրդներուն մէջ ամենէն բարձր վարձատրուած ստեղծագործութիւններն են:

Իր իսկ հարազատներուն վկայութեամբ, այսօր հրապարակի վրայ են նաեւ... «Կեղծ Կիրակոսեան» գործերը, որոնք յաճախ շփոթի կը մատնեն մեծ արուեստագետին երկրպագուները: Այսօր կը ցուցակագրուի Փոլ Կիրակոսեանի գեղարուեստի աշխարհին պարգեւած ստեղծագործութիւնները, բոլոր անձնական հաւաքածուներու, ցուցասրահներու եւ թանգարաններու մէջ:

Մանուելլա Կիրակոսեան, մեծ արուեստագետին գեղանկարիչ դուստրը կ'ըսէ, «Կը ինդրենք բոլոր արուեստասերներէն, որոնք իրենց հետ մեր հօր գեղանկարներէն ունին, կապուին մեզի հետ եւ յայտնեն անոնց գոյութեան վիճակի մասին, հետեւեալ հեռաձայնի թիւերով, +961 3 044473, +961 3 211691»: Ապա ան կ'աւելցնէ, «Փոլ Կիրակոսեան դրամ չէր սիրեր, չէր կրեր: Տարին մի քանի անգամ ալ բարեգործական ցուցահանդեսներ կու տար, որովհետեւ ինքն ալ որբ ու չքաւոր, տարագրեալ եւ հաշմանդամ եղած էր»:

 Արուեստաբան Ժալալ Խուրի «Փօլին եւ Ժուլիեթին միջեւ» գրութեան մէջ կ'արձանագրէ, «...Փոլ Կիրակոսեան նուազագոյնը որ կրնանք ըսել՝ մեծ գեղանկարիչ է: Սակայն իր պարագային՝ կինը կանգնած է ամէն մեծի թիկունքին: Ան բաւարարուած չէր իր դերով ըլլալու սիրող կին, հոգատար մայր, ուշադիր օգնական, ներշնչող բնորդուհի, ճարտար քարտուղարուհի... եւ Փօլին ողբերգրական արկածէն ետք ծառայեց որպէս հիւանդապահուհի, իմփրեսարիօ»:

«Փոլ Կիրակոսեան արուեստի պատմութեան եւ տեսութեան շտեմարան մըն էր» կ'ընդգծէ արուեստաբան Մովսէս Ծիրանի. ան կը շարունակէ, «եւ պատահական չէ որ շուրջ տասնեակ մը լեզուներու կը տիրապետէր եւ կամ իտալացիներուն իրենց լեզուով կը դասախօսէր Լեոնարտօ Տա Վինչիի մասին»:

